Սիպիլ

Հերոսը

Ո՛վ մարդ հերոս, հանճար և կամ նահատակ,
Որ քու անձիդ համար երբեք չես ապրած,
Որ հրայրք մը ունիս քեզի նրպատակ,
Գաղափար մը անձնուրաց:

Թողած կյանքի լայն ուղիները փափուկ,
Անպատրսպար՝ տոթերուն տակ ու ձյունին,
Միշտ բարձրացար քարուտ ճամբե մը դերբուկ
Ուր ոտքերը կ՝արյունին:

Սրրահներու մեջ երբ բոցը կը վառեր,
Երբ ջահերը կը շողային լուսարձակ,
Դուն մեկնեցար հոն, ուր ցուրտ էր, խավար էր,
Եվ հեռու էր լուսածագ:

Թափթրփեցան թարմ երազներդ անհամար.
Դեռափրթիթ օրերդ անցան հոգերով.
Չը ծաղկեցավ ոչ մեկ գարուն քեզ համար.
Արտասվեց իղձդ ու գորով:

Պրսակվեցան վարդերով ցած գրլուխներ.
Աշխարհ չունի հերոսին փառք արժանի.
Փուշ-պրսակին ներքև՝ մաքուր, անվեհեր

Իր ճակատը կ՝արյունի:

Ջրպարտեցին ու դատեցին քեզ մարդիկ,
Մրրոտեցին սրտիդ հույզերը պայծառ.